Կ Ա Ր Ծ Ի Ք

ՌԱՖԱՅԵԼ ԳԱՌՆԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ «ՄԵԴԻԱ ԴԻՍԿՈՒՐՍԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ (ԱՆԳԼԵՐԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)» ԹԵՄԱՅՈՎ Ժ. 02.07. «ՌՈՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Զանգվածային լրատվության արդի միջոցները մարդու կեցության անքակտելի մասն են կազմում, քանի որ իրականացնում են շրջակա աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին իրազեկելու կարևորագույն գործառույթը: ԶԼՄ-ներում կիրառվող լեզվական հնարների շնորհիվ է հասարակության յուրաքանչյուր ներկայացուցիչ ընկղմվում իրադարձությունների հորձանուտը, վերապրում դրանք ընկալման տարբեր մակարդակներում:

Ռաֆայել Հարությունյանի՝ «Մեդիա դիսկուրսի համակցված քննություն (անգլերեն քաղաքական խոսքի փաստական նյութի հիման վրա)» թեմայով ատենախոսությունը նպատակաուղղված է վերհանելու և համապարփակ կերպով վերլուծելու քաղաքական մեդիա դիսկուրսում կիրառվող մտաշահարկման հնարների ներուժը, որի միջոցով լրագրողները կարողանում են ուղղորդել իրենց ընթերցողների ընկալումը: Վերոնշյալ նպատակին հասնելու համար առաջադրվել են մի շարք խնդիրներ, որոնց լուծմանը ատենախոսը հետևողականորեն անդրադարձել է աշխատանքի վերլուծական մասում:

Ատենախոսության թեմայի արդիականությունը հիմնավորվում է այն մեծ դերով, որ քաղաքական մեդիա դիսկուրսը ունի ժամանակակից մարդու կյանքում: Հետևապես, վերջինիս շրջանակներում կիրառվող մտաշահարկման ներակա և արտակա դրսևորումների համակողմանի քննությունը թույլ է տալիս ձևավորելու մտաշահարկման լեզվագործաբանական կաղապար:

Աշխատանքի գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ փորձ է արվում քաղաքական լուրեր ներկայացնող հոդվածները ենթարկել համակցված և համապարփակ լեզվագործաբանական արժևորման՝ քննության տարբեր մեթոդների կիրառմամբ: Նորույթ է նաև առցանց հարցման միջոցով կատարված որակական-քանակական հետազոտությունը, որը միտված է բացահայտելու հանրության տարբեր շերտերի ներկայացուցիչների մտաշահարկային խոսքի ընկալման յուրահատկությունները՝ պայմանավորված տարբեր գործոններով:

Աշխատանքը տեսական և գործնական կարևոր արժեք ունի, այն կնպաստի քաղաքագիտության, հասարակագիտության, լրագրության և լեզվաբանության ոլորտներում մտաշահարկման երևույթին առնչվող տեսական և գործնական խնդիրների լուծմանը և նոր ուղղությունների զարգացմանը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, որտեղ միանգամայն հիմնավոր ձևով ներկայացվում են թեմայի արդիականությունը, ուսումնասիրության առարկան, նորույթը, ստացված արդյունքների գիտական ու տեսական արժեքը: Բուն աշխատանքը ներկայացված է երկու գլխով և համապատասխան ենթագլուխներով, որոնց հաջորդում են եզրակացությունը և օգտագործված գրականության ցանկը:

Ատենախոսության առաջին գլուխը («Քաղաքական մեդիա դիսկուրսը որպես տեսական ուսումնասիրության առարկա» (Media-Political Discourse as an Object of Theoretical Study), որը բաղկացած է երեք ենթագլխից, քննարկում է քաղաքական խոսքի և մեդիա-քաղաքական դիսկուրսի ուսումնասիրության տարբեր տեսություններ և մոտեցումներ, լեզու-դիսկուրս հարաբերակցությանը, քաղաքականության հիմնական բաղադրիչների համագործակցությանը վերաբերող այլ խնդիրներ: Երկրորդ ենթագլխում դիտարկվում են լրագրությանը բնորոշ որակական հատկանիշներ ու բնութագրումներ, մինչդեռ երրորդ ենթագլուխը ուղղված է քաղաքական մեդիա դիսկուրսում կիրառվող մտաշահարկման ռազմավարության ու մարտավարության ընդհանուր խնդիրների քննարկմանը, որի արդյունքում ատենախոսը հանգում է այն մտքին, որ մտաշահարկման դեպքերը ճիշտ

ընկալելու և դրա ազդեցությունից խուսափելու համար անհրաժեշտ է դիսկուրսի սթափ ու գիտակցված արժևորում:

Գլուխ II-ում, որը վերնագրված է «Մտաշահարկման տարբեր հայեցակերպերի քննությունը քաղաքական մեդիա դիսկուրսում» (Insights into Different Aspects of Manipulation in Media-Political Discourse), ներկայացված է հինգ ենթագլուխ, որոնք ուղղված են մտաշահարկման երևույթի քննությանը լեզվի տարբեր հայեցակերպերի, մասնավորապես՝ բառային, ձևաբանական, շարահյուսական և ոճական յուրահատկությունների արժևորման դիտանկյունից: Այս գլխի չորրորդ ենթագլխում քաղաքական մեդիա դիսկուրսում տեղ գտած մտաշահարկման դեպքերի տեքստաբանական քննությունը ատենախոսին հնարավորություն է տալիս համակցված մոտեցմամբ վեր հանելու մտաշահարկման իրականացման տարաբնույթ մեխանիզմներ, որոնց համադրմամբ էլ ամբողջանում են լրագրողի մտաշահարկման ռազմավարությունն ու ազդեցության հասնելու մեթոդները: Հինգերորդ ենթագլխում ("Media-Political Manipulation as an Object of Qualitative-Quantitative Study") զետեղված են ատենախոսի կողմից իրականացված քանակական-որակական հետազոտության արդյունքները: Այս ուսումնասիրությունը ատենախոսին թույլ է տալիս նկատել, որ մտաշահարկման ռազմավարությանը դիմակայելու համար անհրաժեշտ է ունենալ ոչ միայն լեզվական և արտալեզվական փաստերի լավ իմացություն, այլև տիրապետել պատկերային ընկալման հմտությունների:

Ուսումնասիրության հիմնական եզրահանգումները ամփոփ ներկայացված են «Եզրակացություն» բաժնում:

Այսպիսով, կարելի է փաստել, որ Ռաֆայել Հարությունյանը իրականացրել է իր առջև դրված բոլոր խնդիրները և նշանակալից արդյունքների հասել: Աշխատանքը գրված է պատշաճ գիտական անգլերենով: Հետազոտական նյութի վերլուծությունը վկայում է ատենախոսի նուրբ դիտողականության մասին:

Ըստ արժանվույն գնահատելով ատենախոսի կողմից կատարված աշխատանքը՝ այդուհանդերձ կցանկանայինք ստանալ որոշ պարզաբանումներ հետևյալ հարցերի վերաբերյալ։

- Աշխատանքի առաջին գլխում, քննարկելով քաղաքական մեդիա դիսկուրսի առանձնահատկությունները, ատենախոսը մտաշահարկումը համարում է քաղաքական մեդիա դիսկուրսի հիմնական գործառույթ։ Կարծում ենք՝ վերոնշյալ դիսկուրսի նաև այլ գործառույթների մանրամասն անդրադարձը ավելի ընդգրկուն կդարձներ աշխատանքը։
- Երկրորդ գլխի հինգերորդ ենթագլխում ատենախոսը քննարկում է քաղաքական մեդիա դիսկուրսում մտաշահարկման դրսևորումների քանակական-որակական հետազոտության արդյունքները՝ վերջիններս ներկայացնելով տեքստային քննարկումների տեսքով, նաև ամփոփելով դրանք աղյուսակներում (էջ 88-95)։ Կարծում ենք՝ աշխատանքը ավելի կշահեր, եթե այդ աղյուսակները զետեղվեին «Հավելված» բաժնում՝ այդպիսով ապահովելով վերլուծական տեքստի շարունակականությունը։
- Քաղաքական մեդիա դիսկուրսում քանակական-որակական հետազոտությունն իրականացնելիս (էջ 82) նշվում է, որ հարցմանը մասնակցել են 325 հոգի, որից 203-ը ինչ-որ պահի ընդհատել են իրենց հարցման գործընթացը, մինչդեռ մնացյալ 122 հարցվողները պատասխանել են բոլոր հարցերին։ Կցանկանայինք իմանալ՝ արդյոք վերլուծության արդյունքներում ամփոփված են միայն այդ 122-ի պատասխանները, թե ընգրկվել են նաև ինչ-որ պահից հարցումն ընդհատած հարցվողների նշումները։
- Նույն հետազոտության շրջանակում հարցում իրականացնելիս, վերլուծության բազմաշերտությունը ապահովելու նկատառումներից ելնելով, արդյոք նպատակահարմար չէր լինի հաշվի առնել հարցվողների գրագիտության աստիճանը, մասնագիտական առանձնահատկությունները և, ինչը ավելի

կարևոր է տվյալ համատեքստում, քաղաքական կողմնորոշումը, քանի որ, ինչպես նշում է Մ. Բախտինը, տեքստի ընկալման գործընթացը բազմահայեցակարգային է, նրա հետևում գտնվող աշխարհն ընթերցողը կարող է իմաստավորել տարբեր կերպ՝ կախված այն բանից, թե ինչ է ցանկանում տեսնել, նպատակային ինչ դիրքից է ուսումնասիրությունը կատարում (Бахтин, 1979):

Վերը նշված նկատառումներն ու դիտարկումներն ամենևին չեն ստվերում ատենախոսի կատարած ուսումնասիրության արժանիքները: Ընդհանուր բովանդակությամբ, քաղաքական մեդիադիսկուրսի համակցված քննության ոլորտում կատարած զգալի աշխատանքով Ռաֆայել Հարությունյանի ատենախոսությունը միամգամայն բավարարում է թեկնածուական աշխատանքին ներկայացվող պահանջները, ատենախոսը արժանի է բանասիրական գիտությունների թեկնածուի իր հայցած գիտական աստիճանին:

Սեղմագիրը և ներկայացված տպագիր հոդվածները ևս համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Վերոնշյալը հնարավորություն է տալիս միջնորդելու ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի առաջ՝ Ռաֆայել Հարությունյանին շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը՝ Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս
ՀՊՏՀ լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Լուսինե Հարությունյան

Հաստատում եմ՝
բ.գ.դ. պրոֆեսոր Լ.Հարությունյանի ստորագրությունը

ՀՊՏՀ գիտական քարտուղար Նարիրա Դարբինյան